ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-22/150-1

ք. Երևան «16» նոյեմբեր 2022թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Միրզախանյանի, որը գործում է նախարարությնա կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նագշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի N9 ՀՓՋ-ի շենքերի կապիտալ վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 37 287 600 (երեսունյոթ միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 6 214 600 (վեց միլիոն երկու հարյուր տասնչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.19 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	<<ՆԱԳՇԻՆ>>ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	Հասցե՝ ք. Երևան, Նազարբեկյան 43/12
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 900011038388	ՀՀ 19300 236192400
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 01282917
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____Ն. Միրզախանյան	_____Ն. Գրիգորյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<<16>> նոյեմբեր 2022թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-22/150-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ԵՐԵՎԱՆԻ N9 ՀՓՁ-Ի ՇԵՆՔԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6,000
	Քանդման աշխատանքներ				
1	Փայտյա պատուհանների քանդում պատուհանասգոգերով. /հանձնում պատվիրատուին/	$մ^2$	27,77	4,000	111,080
2	Փայտյա դռների քանդում /հանձնում պատվիրատուին/	$մ^2$	39,44	4,000	157,760
3	Մետաղապլաստե դռների ապամոնտաժում /հանձնում պատվիրատուին/	$մ^2$	1,89	10,000	18,900
4	Բետոնե հատակների քանդում, իր շերտերի հետ համատեղ	$մ^3$	123,68	14,450	1787,176
5	Հատակի կերամիկական սալիկների հարթաշերտի քանդում	$մ^2$	51,60	0,400	20,640
6	Կերամիկական սալիկներից հատակի քանդում	$մ^2$	51,60	1,200	61,920
7	Փայտե հատակների քանդում, իր շերտերի հետ համատեղ /հանձնում պատվիրատոին/	$մ^2$	60,40	3,000	181,200
8	Լամինատե հատակների ապամոնտաժում իր շերտերի հետ համատեղ	$մ^2$	17,390	2,000	34,780
9	Պատերից փայտե երեսապատման պանելների քանդում	$մ^2$	28,30	3,500	99,050
10	Պատերի վրայից հաղճասալի քանդում	$մ^2$	46,6	3,000	139,800
11	100մմ հաստությամբ միջնորմերի քանդում	$մ^2$	43,16	3,000	129,480
12	200մմ հաստությամբ միջնորմերի քանդում	$մ^3$	4,318	10,390	44,864
13	Պատերից գաջի սվաղի քանդում	$մ^2$	121,30	0,200	24,260
14	Պատերի վրայից g/ավազե սվաղի քանդում	$մ^2$	104	0,200	20,800
15	Առաստաղներից գաջի սվաղի քանդում	$մ^2$	50,46	0,200	10,092
16	Առաստաղների վրայից ներկի հեռացում	$մ^2$	251,18	0,200	50,236
17	Պատերի վրայից ներկի հեռացում	$մ^2$	1045,62	0,200	209,124
18	Շին աղբի դուրս բերում,բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	249,960	4,000	999,840
	Ընդամենը				**4101,002**
	Շին.վերանորոգման աշխատանքներ				
	Բացվածքներ				
1	Առկա մետաղական դռների ներկի մաքրում	$մ^2$	97,200	0,100	9,720
2	Մետաղական դռների 2 շերտ յուղաներկում	$մ^2$	97,200	2,200	213,840
3	Պատուհան մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ , չբացվող /դրպասի/	$մ^2$	7,200	28,000	201,600
4	Պատուհան մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ , բացվող	$մ^2$	13,69	32,000	438,080
5	Պատուհան մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ , չբացվող	$մ^2$	45,78	25,000	1144,500
6	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 600մմ լայնությամբ	1մ՝ դաշտ	59,47	1,500	89,205
7	Պլաստմասե պատուհանագոգ լայնությունը 600մմ արժեքը	գծմ	24,40	4,800	117,120
8	Դուռ մետաղապլաստե բլոկով, սպիտակ,ապակեպատ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ ,	$մ^2$	35,24	39,000	1374,360
	Միջնորմներ				
1	Միջնորմների շարվածք 10սմ հաստ. թեթև բետոնե բլոկներով	$մ^3$	1,44	29,000	41,760
2	Անցքերի լցնում B7,5 դասի թեթև բետոնով	$մ^3$	0,36	34,000	12,240
3	Շարվածքի ամրանավորում	տն	0,2880	450,000	129,600
4	Միջնորմների շարվածք 20սմ հաստ. թեթև բետոնե բլոկներով	$մ^3$	4,32	31,000	133,920
5	Անցքերի լցնում B7,5 դասի թեթև բետոնով	$մ^3$	0,01	34,000	0,367

6	Շարվածքի ամրանավորում	տն	0,0650	450,000	29,250
7	Միաձույլ ե/բ բարավորի պատրաստում B-15 դասի բետոնից	մ^3	0,066	70,000	4,620
8	Ամրան Φ14A500C արժեքը	տ	0,0096	500,000	4,800
9	Ամրան Φ6A240 արժեքը	տ	0,0027	500,000	1,350
	Հատակներ				
1	Խճի նախաշերտի իրականացում 10սմ հաստության	մ^3	36,232	5,700	206,522
2	Խճի նախաշերտի իրականացում 15սմ հաստության ավտոտնակների հատվածում	մ^3	39,399	6,000	236,394
3	50մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ հատակների տակ	մ^2	362,320	2,500	905,800
4	Մամլոգրանիտե սալիկներով հատակների պատրաստում	մ^2	239,06	11,000	2629,660
5	Մամլոգրանիտե սալիկներով,H= 500մմ շրիշակների իրականացում	գմ	93,10	2,000	186,200
6	Լամինատե հատակների իրականացում ներառյալ սպունգը և շրիշակը	մ^2	62,08	7,500	465,600
7	Վինիլային հատակի պատրաստում նախաշերտերով, շրիշակով	մ^2	60,65	8,000	485,200
8	Ավտոտնակների հատվածում B 15 դասի ամրանավորված բետոնից հատակների իրականացում 100մմ հաստությամբ	մ^3	26,27	74,635	1960,363
9	Ամրանային ցանց Φ6մմ, A240 դասի ամրաններից 150x150մմ բեջջիջով	տն	0,988	450,000	444,600
	Ներքին հարդարման աշխատանքներ				
1	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ^2	193,300	0,700	135,310
2	Պատերի լավորակ սվաղում ց/ավազով	մ^2	168,74	0,900	151,866
3	Առաստաղի լավորակ գաջե սվաղ	մ^2	50,460	0,600	30,276
4	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով.	մ^2	353,65	6,000	2121,900
5	Պատերի երեսպատում հաղճասալով	մ^2	57,04	9,000	513,360
6	Պատերի լավորակ ներկում յուղաներկով համատարած մածիկապատմամբ	մ^2	126,94	2,400	304,656
7	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով համատարծ մածիկապատմաբ	մ^2	1240,84	2,500	3102,100
8	Առաստաղների լավորակ ներկում կիսափայլուն լատեքսային ներկով համատարած մածկապատումով	մ^2	271,54	2,500	678,850
9	Պլաստմասե կոռոբիի տեղադրում 200x200մմ	գմ	32	0,800	25,600
	Տանիք				
1	Տանիքածածկի վնասված թերթերի քանդում	մ^2	43,20	0,130	5,616
2	Շին աղբի դուրս բերում,բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0,194	2,000	0,389
3	Նոր տանիքածածկի իրականացում ցինկապատ ԿՊ-21-0,55 պրոֆիլավոր թիթեղներից	մ^2	43,20	6,500	280,800
4	Ջրահեռացման խողովակների տեղադրում ներառյալ ջրհոս ձագարները Φ 120 մմ h-8մ	կ-տ	6	24,790	148,740
5	Տանիքի կախովի ջրհորդանների տեղադրում ցինկապատ պողպատե թիթեղներից 0,55մմ հաստ	գմ	37,00	4,500	166,500
	ԸՆԴԱՄԵՆը				**19132,634**
	Էլեկտրամատակարարում				
1	Առաստաղային լուստուների տեղադրում «Լեդ» տիպի լուսատուներից 15Վտ	հատ	136,00	6,000	816,000
2	Առաստաղային լուստուների տեղադրում«Լեդ» տիպի լուսատուներից 48Վտ	հատ	12,00	16,000	192,000
3	Արտաքին լուստուների տեղադրում «Լեդ» տիպի լուսատուներից 80Վտ	հատ	3,00	35,000	105,000
4	Արտաքին լուսատուների համար պահունակների պատրաստում պողպատե Φ40x3,0մմ խողովակներից	հատ	3,00	3,000	9,000

5	Թերթապողպատ 300x500x6մմ	կգ	21,3	0,800	17,040
6	Պողպատե մասերի 2շերտ յուղաներկում	$մ^2$	2,060	2,000	4,120
7	Հեղյուս M 16	հատ	12,00	0,300	3,600
8	Ավտոմատ անջատիչների տուփի տեղադրում /12տեղ/	հատ	2,00	12,000	24,000
9	Ավտոմատ անջատիչ միաֆազ 16Ա	հատ	22,00	3,200	70,400
10	Ավտոմատ անջատիչ միաֆազ 63Ա	հատ	1,00	7,600	7,600
11	ՎՎԳ 3x2,5մմ2 մալուխների անցկացում	գմ	610,00	1,200	732,000
12	Անջատիչների տեղադրում մեկտեղանի	հատ	18,00	2,000	36,000
13	Անջատիչների տեղադրում երկտեղանի	հատ	4,00	2,000	8,000
14	Վարդակների տղադրում երկտեղանի	հատ	65,00	2,000	130,000
15	ՎՎԳнг- 5x35մմ2 մալուխների անցկացում /դեպի ջեռուցման կաթսա/	գմ	45,00	11,000	495,000
	Ընդամենը				**2649,760**
	Ջրամատակարարման և կոյուղու ցանց				
	Ապամոնտաժային աշխատանքներ				
1	Ասիական թասերի ապամոնտաժում	հատ	2,00	3,000	6,000
2	Կերամիկական լվացարանի ապամոնտաժում	հատ	1,00	4,000	4,000
	Մոնտաժային աշխատանքներ				
1	Φ20մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում սառը ջրամատակարարման համար /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	40,00	2,200	88,000
2	Φ20մմ պոլիէթիլենային խողովակների տեղադրում տաք ջրամատակարարման համար /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	45,00	2,200	99,000
3	Գնդաին փականների տեղադրում Φ15մմ	հատ	6,000	5,000	30,000
4	Կերամիկական լվացարանի տեղադրում սիֆոնով	հատ	1,0	35,000	35,000
5	Լվացարանի ծորակ-խառնիչնի տեղադրում	հատ	1,0	10,000	10,000
6	Կոյուղու պոլիվինիքլորիդե խողովակների տեղադրում Φ50մմ /հիդրավլիկ փորձարկումով/	գմ	15,0	1,500	22,500
7	Կոյուղու պոլիվինիքլորիդե խողովակների տեղադրում Φ100մմ /հիդրավլիկ փորձարկումով/	գմ	20,0	2,000	40,000
8	Հոսակների տեղադրում d=50մմ	հատ	2,0	8,000	16,000
9	Ասիական թասերի տեղադրում	հատ	2,00	29,000	58,000
10	Ցնցուղի տեղադրում	հատ	1,0	5,000	5,000
	Ընդամենը				**413,500**
	Ջեռուցում				
1	Գազի ջեռուցման կաթսայի տեղադրում 32կվտ	հատ	2	60,000	120,000
2	Հիդրավլիկ սալքի տեղադրում Φ50մմ	կ-տ	1,00	10,000	10,000
3	Շրջապտույտի պոմպի տեղադրում G10մ3/ժ, H=10մ	կ-տ	1	10,000	10,000
4	Բաշխիչ Φ32մմ ելքով,	կ-տ	2,00	12,000	24,000
5	Ընդարձակման բաք V=10լ	հատ	2,000	25,000	50,000
6	Ձտիչ Φ32մմ	հատ	2,00	2,195	4,390
7	Φ32մմ մետաղապլաստե խողովակաշարի մոնտաժում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	50,00	2,000	100,000

8	Φ25մմ մետաղապլաստե խողովակաշարի մոնտաժում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	66,000	1,900	125,400
9	Φ20մմ մետաղապլաստե խողովակաշարի մոնտաժում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	64,00	1,900	121,600
10	Φ15մմ մետաղապլաստե խողովակաշարի մոնտաժում /լվացումով և հիդրավլիկ փորձարկումով/	գմ	146,00	1,900	277,400
11	Մարտկոցի փական վերևի Φ15մմ	հատ	38,00	3,000	114,000
12	Օդահեռացման փական Φ15մմ	հատ	38,00	1,200	45,600
13	Մեկուսիչ խողովակ 42x9մմ	գմ	22,00	0,700	15,400
14	Անցքերի բացում պատերում Φ50մմ	հատ	16,00	5,000	80,000
15	Գնդավոր փականների տեղադրում Φ32մմ	հատ	8,00	4,000	32,000
16	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500 մմ /417x0,28=116,76էկմ.	էկմ	116,76	1,700	198,492
17	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սեկց.	417,00	5,830	2431,110
18	Պողպատյա խողովակներից պատյանի տեղադրում Φ108x3մմ	գմ	22	1,900	41,800
19	Մետաղապլաստե ձևավոր մասեր	հատ	250,00	0,200	50,000
	Ընդամենը				**3851,192**
	Ընդամենը շին.մոնտաժային աշխատանքներ				**30148,088**
	Սարքավորումներ				
1	Գազի ջեռուցման կաթսա 32կվտ	հատ	2	394,000	788,000
2	Հիդրավլիկ սալք Φ50մմ	կ-տ	1,00	49,000	49,000
3	Շրջապտույտի պոմպ G10մ3/ժ, H=10մ	կ-տ	1	87,912	87,912
	Ընդամենը սարքավորումներ				**924,912**
	Ընդամենը շին.մոնտաժ.+սարքավորումներ				**31073,000**
	ԱԱՀ	**20%**			6214,600
	Ընդամենը				**37287,600**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038388
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____ Լ. Միրզախանյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<ՆԱԳՇԻՆ>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նազարբեկյան 43/12
Բանկ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 19300 236192400
ՀՎՀՀ 01282917
Տնօրեն՝

_____ Ն. Գրիգորյան

(ստորագրությունն)
Կ.Տ

Հավելված թիվ 1.1
«16» նոյեմբեր 2022թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-22/150-1 ծածկագրով պայմանագրի

ՆԿԱՐԱԳԻՐ
սարքերի և սարքավորումների

«ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ - ն «ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-22/150» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող սարքերի և սարքավորումների					
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
2	Գազի ջեռուցման կաթսա	DONGYUAN	L1 pb32 - hk	Foshan shunde dongyuan	32 կվտ	1տարի
2	Հիդրավլիկ սալք	DONGYUAN	Ok- 25/3	Foshan shunde dongyuan	Φ50մմ	1տարի
2	Շրջապտույտի պոմպ	TOYOO	IP 44	TAIZHOU TOYOO MACHINERY	G10մ3/ժ, H=10մ	1տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038388
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Լ. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՆԱԳՇԻՆ>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նազարբեկյան 43/12
Բանկ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 19300 236192400
ՀՎՀՀ 01282917
Տնօրեն՝

_____Ն. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«16» նոյեմբեր 2022թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԵՐԵՎԱՆԻ N11, ԵՐԵՎԱՆԻ N9 ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ N1 ՀՓՋ-ՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	*Երևանի N9 ՀՓՋ-ի կապիտալ վերանորոգման աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	60 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038388
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Լ. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<ՆԱԳՇԻՆ>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նազարբեկյան 43/12
Բանկ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 19300 236192400
ՀՎՀՀ 01282917
Տնօրեն՝

_____Ն. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«16» նոյեմբեր 2022թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-22/150-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	*45611300/2*	*Երևանի N9 ՀՓՋ-ի կապիտալ վերանորոգման աշխատանքներ*											*37 287 600*	*37 287 600*	*37 287 600*

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038388
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

Լ. Միրզախանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՆԱԳՇԻՆ>>ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Նազարբկյան 43/12
Բանկ՝ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 19300 236192400
ՀՎՀՀ 01282917
Տնօրեն՝

Ն. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2022թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-22/150-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2022թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-22/150-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն